ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի նոյեմբերի 15-ից 17-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2022 թվականի նոյեմբերի 15-ից 17-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Հրավերները ստացվել են ԱՊՀ ՀՏԽ-ի նախագահ, ՌԴ տրանսպորտի նախարար Վիտալի Սավելևի, Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության քարտուղարության, ինչպես նաև ԵԱՏՄ Կոլեգիայի անդամ-էներգետիկայի և ենթակառուցվածքների գծով նախարար Արզիբեկ Կոժոշևի կողմից:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն «Տրանսպորտային շաբաթ-2022» միջոցառման շրջանակներում անցկացվելիք ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտում լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի 6-րդ և Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության 42-րդ նիստերին:

6. **Քննարկված թեմաները.**

   - ✓ Քննարկվել են 2021-2023 թվականների ԵԱՏՄ տրանսպորտային քաղաքականության իրականացման ճանապարհային քարտեզի միջոցառումների իրականացման ընթացքը,
   - ✓ մտքերի փոխանակում է տեղի ունեցել ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտային համալիրների աշխատանքի արդյունքների, կարգավորող իրավական դաշտի կատարելագործման վերաբերյալ,
   - ✓ կողմերը տեղեկացրել են «Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովման մասին» թիվ 46 ընդհանուր գործընթացի իրականացման պատրաստակամության աստիճանի մասին,
   - ✓ քննարկվել է «Տրանսպորտային ծառայությունների համաշխարհային շուկայի վերլուծություն» վերլուծական զեկույցի

նախագիծը, բեռնափոխադրման համաձայնագրի իրականացման հարցեր:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

Նիստի մասնակիցները հատուկ ուշադրություն են դարձրել միջազգային պայմանագրերի ստորագրմանը և իրագործմանը: Մասնակիցները վերահաստատել են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ եվրասիական տրանսպորտային միջանցքներում ընդգրկված ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու դեպքում փոխադրամիջոցների թույլատրելի զանգվածների, առանցքային բեռնվածքների և չափսերի մասին համաձայնագրի շուտափույթ ընդունման մտադրությունները: Նիստի ընթացքում նշվել է, որ բեռնափոխադրումների վերաբերյալ համաձայնագրի ընդունմանն ուղղված ընթացակարգերը ՀՀ-ում ավարտված է:

Հաստատվել է 2010-2022 թվականների համար Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության գործունեության հաշվետվությունը:

Հանդիպում է տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարի տեղակալ Դ.Ս. Զվերևի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ՌԴ տրանսպորտային համագործակցության մի շարք հարցեր:

8. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>**

Հանդիպման արդյունքներով ստորագրված փաստաթղթեր, ընդունված որոշումներ առկա չեն:

9. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>**

Հստակեցվել է Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության և ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտում լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի հերթական՝ համապատասխանաբար 43-րդ և 7-րդ նիստերի անցկացման վայրն ու ժամկետները:

10. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>**

22.11.2022 թ.